# ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(ԱԾՀԶԿ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

2003

Առողջապահական ծառայությունների հետազոտման ու զարգացման կենտրոնը (ԱԾՀԶԿ) առողջապահական գիտությունների ֆակուլտետին (ԱԳՖ) կից հետազոտական կենտրոն է՝ տեղակայված Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ): ԱԾՀԶԿ-ը հիմնադրվել է 1995թ.՝ հասարակական առողջապահության բազմաճյուղ բնագավառի հետազոտական և զարգացման կարիքներին արձագանքելու համար: Կից գործող ԱԳՖ-ը տրամադրում է Հասարակական առողջապահության մագիստրոսի ծրագիր՝ համագործակցելով ԱՄՆ-ի Ջոնս Հոփկինսի համալսարանի Բլումբերգի Հիգիենայի և Հասարակական առողջապահության ֆակուլտետի հետ: ԱԾՀԶԿ-ը գործնական ուսուցման հնարավորություններ է ընձեռում ԱԳՖ-ի ուսանողներին ծրագրերի մշակման և հետազոտությունների իրականացման ասպարեզներում, միաժամանակ բավարարելով Հայաստանի և տարածաշրջանի կարիքները:

ԱԾՀԶԿ-ի երկարաժամկետ նախաձեռնություններից է Գարո Մեղրիկյանի կանխարգելիչ ակնաբուժության ինստիտուտի (ԳՄԿԱԻ) հիմնադրումը, որը նպատակ է հետապնդում կանխարգելել կուրությունը և նպաստել մատչելի ակնաբուժական ծառայությունների զարգացմանը Հայաստանում: ԳՄԿԱԻ-ը տեղակայված է ՀԱՀ Կենտրոնում (Երևան, Ալեք Մանուկյան 9):

ԱԾՀԶԿ-ի մյուս կլինիկական նախաձեռնությունների թվում են. 1) ՀԱՀ-ի աշխատակազմին սպասարկող կանխարգելիչ ուղղվածությամբ ամբուլատորիայի գործու-նեությունը, և 2) համագործակցության ծրագիրը ՀԱՀ-ի և Նորք Մարաշ Բժշկական Կենտրոնի միջև՝ ուղղված բուժօգության որակի ապահովման համակարգի զարգացմանն ու ներդրմանը:

## ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կենտրոնի հետազոտական կազմն իր փորձառությունն է տրամադրում՝ աջակցելու գոյություն ունեցող

առողջապահական ենթակառուցվածքներին և նպաստելու որակյալ բուժօգնություն ցուցաբերող պետական և մասնավոր սեկտորների զարգացմանը: Կենտրոնն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- Գործնական հնարավորություններ ընձեռել ՀԱՀ Հասարակական առողջապահության ֆակուլտետի ուսանողներին՝ մասնակցելու հետազոտություններին և ծրագրերի մշակմանը:
- Ծառայել որպես կապող օղակ Առողջապահության նախարարության, մարդասիրական և այլ կազմակերպությունների և գործակալությունների միջև:
- Տեխնիկական աջակցություն ցուցաբերել ՀՀ նախարարություններին և գիտահետազոտական ինստիտուտներին:
- Նեցուկ լինել շրջաններում առողջապահական ծառայությունների ծրագրային զարգացմանը՝ համագործակցելով մարզերի Առողջապահական վարչությունների հետ:
- Տեխնիկական աջակցություն ցուցաբերել միջազգային կազմակերպություններին՝ ներդնելու և գնահատելու իրենց առողջապահական ծրագրերը ՀՀ-ում:

## ԱԾՀՁԿ-ի հետ համագործակցող կազմակերպությունները

Բազմաթիվ կազմակերպությունների թվում, որոնք համագործակցել են ԱԾՀՁԿ-ի հետ, առավել նշանակալից են հետևյալները.

- Ամերիկյան միջազգային առողջապահական միություն
- Ամերիկյան միջազգային կարմիր խաչ
- Հայկական միջազգային առողջապահական ասոցիացիա
- ՁԻԱՀ-ի հսկողության և կանխարգելման հայկական ազգային կենտրոն
- Հայաստանի սոցիալական վերափոխման ծրագիր (PADCO/Abt)
- ԱՄՆ-ի Ջորջթաունի համալսարանի Վերարտադրողական առողջության ինստիտուտ
- Ձինիշյան հիշատակի հիմնադրամ
- Ձոնս Հոփկինսի համալսարան/ բնակչության հետ հաղորդակցման ծառայություններ
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF)
- Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե (UMCOR)
- ԱՄՆ-ի Փենսիլվենայի համալսարանի բուժքույրական մասնաճյուղ
- ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն

Համալսարանն ունի ԱՄՆ գրանցումով ներհամալսարանական էթիկական հանձնաժողով և հետազոտվող մարդկանց իրավունքների ապահովման ֆեդերալ լիազորություն: Ներկայումս համալսարանը գտնվում է Ուսումնական հաստատությունների արևմտյան միության կողմից հավատարմագրման փուլում:

## ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՐՈՇ ԾՐԱԳՐԵՐ

➢ Առողջ կենսակերպ.

Դպրոցականների առողջության ծրագիր – վնասակար նյութերի չարաշահում (2000)

Ընտանիքների առողջության ուսումնասիրություն – Սևան (2000)

Ընտանիքների առողջության ուսումնասիրություն – Արմավիր (2000)

Կրթական նյութերի կազմում – Հայաստանի բարեփոխումների ծրագիր (2002)

➢ Վարակիչ հիվանդություններ

Խնամողների գիտելիքները ՍՇՀ և փոքրլուծության վերաբերյալ (1997)

ՁԻԱՀ ազգային տեղեկատու (1997)

Դեպքի վարման ուսումնասիրություն: Շնչառական վարակներ (1997)

Հեպատիտ B-ի դեմ պատվաստման ուսումնասիրություն (2000)

➢ Ծրագրերի գնահատում

Առողջապահական համակարգի ենթակառուցվածքի վերլուծություն (1998)

Մանկական մահացության ուսումնասիրություն և վերահսկում (1999)

Երեխաների իրավիճակի մասին զեկուցագիր Համաշխարհային գագաթաժողովին (2000)

Առողջապահական ծառայությունների հետազոտման ու զարգացման կենտրոնի կամ նրա գործունեության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել.


Առողջապահական ծառայությունների հետազոտման
ու զարգացման
կենտրոնի տնօրեն

Դր. Մայքլ Թոմփսոնին,

*հասցեն*

Հայաստանի Հանրապետություն
Երևան, 375019
Մարշալ Բաղրամյանի 40
Հայաստանի ամերիկյան համալսարան

Հեռախոս՝ 51-25-92

Միջազգային ֆաքս՝ (0 11 3742) 51-25-66

էլեկտրոնային փոստ՝ mthompso@aua.am


ԱԾՀԶԿ-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ նաև ՀԱՀ ինտերնետային ցանցի միջոցով.

http://www.aua.am